MA-SIS
ՄԱ-ՍԻՍ
N° 8

Gazette des Arméniens de Lille, janvier– juin 2010

Լիլահայ համայնքի պարբերական, հունվար - հունիս 2010

ASSEMBLÉE GÉNÉRALE DE L'ASSOCIATION *ARARAT*

Le 22 janvier 2010 a eu lieu l'assemblée générale annuelle de l'association *Ararat*. Treize personnes étaient présentes et deux étaient excusées.

Le bilan d'activité (octobre 2008 – janvier 2010) a récapitulé les événements qui ont été notamment relatés au travers de la gazette de l'association :

Le 22 janvier 2010 a eu lieu l'Assemblée générale de l'association *Ararat*
2010 թ. հունվարի 22-ին տեղի ունեցավ «Արարատ» միության ընդհանուր ժողովը

Après un changement de siège social, les activités ont pu reprendre le 14 février 2009 dans de nouveaux locaux prêtés par la Ville de Mons en Barœul au 41 rue Vincent de Paul.

1) Cours d'arménien pour les enfants chaque samedi ;
2) Permanences de l'association chaque samedi ;
3) Deux numéros de la gazette de l'association *Ma-Sis* ;
4) Quatre déplacements :

. octobre 2008, pour le match de football Belgique-Arménie à Bruxelles,

. mars 2009, pour voir à nouveau au *Casino de Paris* le spectacle de *Yeraz* dans sa version complète,

. juin 2009, pour voir le spectacle de fin d'année des élèves de l'école *Yeraz* à Alfortville,

. novembre 2009, spectacle de *Navasart* à Issy-les-Moulineaux

5) Différentes participations à des manifestations :

. Concert de *doudouk* d'Araïk Bakhtikian dans le cadre du festival *Jazz en Nord* de Marcq en Barœul ;

. Exposition encrage de Jean-Jacques Tachdjian à la Maison folie de Wazemmes ;

. Conférence sur la préhistoire en Arménie à Tourcoing par l'association TLS ;

. Les Vespérales de Mons en Barœul ;

. Exposition *Istanbul, traversée,* et *Miroirs d'Orients* au palais des Beaux arts de Lille ;

«ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԸ

2010 թ. հունվարի 22-ին կայացավ «Արարատ» միության տարեկան ընդհանուր ժողովը: Ներկա էին՝ 13, հարգելի պատճառներով բացակա՝ 2 անդամ:

Ամփոփվեցին 2008 թ. հոկտեմբերից մինչև 2010 թ. հունվար ամիսը ծավալված գործունեության արդյունքները, որոնք մասնավորապես արտացոլվել էին մեր միության թերթի էջերում:

2009 թ. փետրվարի 14-ից՝ միության գրանցման վայրը փոխելուց հետո, մեր գործունեությունը վերսկսվեց Մոնս ան Բարոլ քաղաքի կողմից տրամադրված նոր տարածքում, հասցեն՝ Վենսան դը Պոլի փողոց, 41:

1) շաբաթօրյա հայերենի դասընթացներ՝ երեխաների համար,

2) միության պարբերական հավաքույթներ՝ դասընթացներին զուգահեռ,

3) «Մա-Սիս» թերթի 2 նոր համարների հրատարակում,

4) չորս ուղևորության կազմակերպում.

. Բրյուսել, 2008 թ. հոկտեմբեր, Բելգիա-Հայաստան ֆուտբոլային խաղին ներկա լինելու,

. Փարիզ, «Կազինո դը Պարի», 2009 թ. մարտ, «Երազ» համույթի ներկայացման ամբողջական տարբերակը դիտելու,

. Ալֆորվիլ, 2009 թ. հունիս, «Երազ» պարի դպրոցի սաների տարեվերջյան ներկայացումը դիտելու,

. Իսսի-լե-Մուլինո, 2009 թ. նոյեմբեր, «Նավասարդ» համույթի ներկայացումը դիտելու:

5) մասնակցություն տարբեր բնույթի միջոցառումների.

. Դուդուկահար Արայիկ Բախտիկյանի համերգին՝ Մարք ան Բարոլ քաղաքում կայացած Նորդի ջազի փառատոնի շրջանակներում,

. Ժան-Ժաք Թաշչյանի գրաֆիկական ցուցահանդեսին՝ Ուազեմ թաղամասի «Հրաշքների տանը»,

L'Assemblée générale 2009/2010 a été « clôturée » par un dîner intime
2009/2010 թթ, ընդհանուր ժողովը «եզրափակվեց» մտերմիկ ընթրիքով

. Deuxième fête interculturelle des associations de la Maison des associations de Lille.

6) Messes de Noël arménien début 2009 et début 2010 ;

7) Avant-première du film *L'armée du crime* de Robert Guédiguian et débats avec le réalisateur et les deux acteurs principaux : Virginie Ledoyen et Simon Abkarian en septembre 2009 ;

8) Soirée-débat sur la question de l'identité avec notamment Serge Avédikian après la diffusion de son film *Nous avons bu la même eau*.

Sur le plan financier : au début du mois de janvier 2010, l'association a récolté 4 843,97 € (quasiment la même chose que l'année dernière mais sur un an et demi) et a dépensé 3 739,59 €. En plus des cotisations de nos adhérents (1 170 € pour deux années) et des versements pour la gazette et l'école, la ville de Mons en Baroeul nous a octroyé une subvention de 150 €, deux membres nous ont fait don de 250 € pour deux conférences sur Moscou, et nous avons un donateur régulier qui nous verse 15 € chaque mois. À l'exception de ces sommes, les gains proviennent de nos activités et des actions menées, pour certaines subventionnées. Bien que la plupart de nos activités soient légèrement déficitaires, notre budget trouve son équilibre grâce aux cotisations des membres, aux dons et subventions. Le budget réservé à l'apprentissage de la langue est excédentaire, celui de la gazette l'est également mais bénéficie des réservations de copies effectuées l'année précédente. L'ensemble de la comptabilité est consultable par les membres de l'association sur demande.

Les membres approuvent à l'unanimité ces bilans d'activité et financier.

39 familles ont adhéré à l'association pour l'année en cours (39 en 2008/2009, 42 en 2007/2008). La question qui se pose est de savoir comment élargir le nombre des familles cotisantes. Certaines disent ne pas être au courant de nos activités. D'autres font semblant de ne pas savoir. Narine et Tatevik proposent de faire encore de la publicité auprès des familles monsoises quitte à les accompagner lors de leur première venue.

Le Conseil d'Administration de l'association ne s'est jamais réuni car chaque samedi l'association a sa permanence au cours de laquelle les projets sont montés et les décisions prises. Le Conseil d'Administration se compose de 12 membres élus pour deux ans. Neuf postes avaient été pourvus en 2007 et trois en 2008. Les neufs postes pourvus en 2007 doivent être remis au vote. Dikran et Christina qui étaient absents ont cependant manifesté leur volonté de rester membres du CA.

À l'unanimité les membres décident de reconduire les sortants au Conseil d'administration et dans leurs fonctions précédentes.

Lors de l'Assemblée Générale, les membres ont décidé, à l'unanimité :

1)de confirmer la fixation de la cotisation 2009/2010 à 15 € par famille ;

2)de fixer le prix de la gazette à un prix coûtant, selon son nombre de pages, plus 50 centimes à 1 € pour couvrir le coût des numéros donnés aux officiels (bibliothèque, élus, autres associations…) ;

3)de laisser le prix des cours d'arménien à 5 € par mois par enfant sans obligation de cotisation à l'association.

Les membres de l'association ont échangé sur les projets à monter pour l'année prochaine :

. Retourner voir Serge Avédikian à Bruxelles le 8 février ;

. Assister au tournoi d'échecs international de Capelle la Grande le 20 février où quelques Arméniens de l'équipe nationale (double championne olympique) viennent jouer ainsi que Tigran Dermanyan, fils d'Alla et grand maître aux échecs ;

. Envisager un déplacement à Paris pour célébrer la Fête

. Նախապատմական Հայաստանին նվիրված դասախոսությանը՝ կազմակերպված Թուրքուեն քաղաքի «Մեծահասակների ժամանց» միությունում,

. Մոնս ան Բարոլ քաղաքի «Երեկոներ»-ին,

. «Ուղևորություն դեպի Ստամբուլ» և «Արևելքի պատկերները» ցուցահանդեսներին՝ Լիլի Գեղարվեստի պատկերասրահում,

. Միությունների տան կազմակերպած երկրորդ Միջմշակութային տոնին,

6) 2009 և 2010 թթ. հայկական Սուրբծննդյան պատարագների կազմակերպում,

7) 2009 թ. սեպտեմբերին Ռոբեր Գեդիկյանի «Ոճրագործների բանակը» ֆիլմի պրեմիերայի և կինոռեժիսորի ու նրա երկու գլխավոր դերակատարների՝ Վիրժինի Լեդուայենի և Սիմոն Աբգարյանի մասնակցությամբ ֆիլմի քննարկման կազմակերպում

8) Երեկո-քննարկում ազգային ինքնության հարցի շուրջ Սերժ Ավետիքյանի մասնակցությամբ՝ վերջինիս «Մենք խմել ենք նույն ջուրը» ֆիլմի ցուցադրումից հետո:

Ֆինանսապես 2010 թ. հունվար ամսվա սկզբի դրությամբ միությունը հավաքագրել էր 4 843,97 € (գրեթե անցյալ տարվա հավաքած գումարը, միայն թե մեկուկես տարվա ընթացքում) և ծախսել՝ 3 739,59 €: Բացի անդամավճարներից (1 170 €՝ երկու տարվա մեջ) և թերթի ու դպրոցի համար վճարումներից, մենք նաև ստացել ենք Մոնս ան Բարոլ քաղաքի ֆինանսական օժանդակությունը՝ 150 €, միության երկու անդամների կարդացած դասախոսություններից ստացված հոնորարները՝ 250 €, և մեկ բարերարի կանոնավոր փոխանցումները՝ ամսական 15 €: Այս գումարներից բացի մուտքերը գալիս են մեր գործունեությունից և կազմակերպած միջոցառումներից, որոնց մի մասը ֆինանսավորված են: Գրեթե մեր բոլոր կազմակերպած միջոցառումները ունեն փոքր չափերի հասնող ճեղքվածք, որը փակվում է անդամավճարների, նվիրատվությունների և այլ ֆինանսական օժանդակության շնորհիվ: Հայոց լեզվի դասընթացների բյուջեն հավելյալ է: Թերթի մնացորդը նույնպես դրական է, բայց մենք դեռ օգտագործում ենք անցյալ տարվանից մնացած բաժանորդական քարտի մնացորդը: Ըստ պահանջի միության անդամները կարող են ծանոթանալ ֆինանսական ամբողջ հաշվետվությանը:

Ընդհանուր ժողովին ներկա գտնվող անդամները միաձայն հավանություն տվեցին գործունեության արդյունքներին:

2009/2010 թթ. հունվար ամսվա դրությամբ միությունն ունի 39 ընտանիք-անդամ (39՝ 2008/2009 թթ., 42՝ 2007-2008 թթ.): Հարցադրում եղավ, թե ինչպե՞ս անել, որ անդամագրված ընտանիքների թիվն ավելանա: Մի մասն ասում է, թե տեղյակ չէ մեր գործունեությունից: Մի մասն էլ ցույց է տալիս, թե տեղյակ չի: Նարինեն ու Տաթևիկը առաջարկում են կրկին գովազդել մոնսաբնակ ընտանիքներին, եթե անգամ հարկ լինի, ապա նրանց ուղեկցել առաջին անգամ:

Միության վարչական խորհուրդը ոչ մի անգամ չի գումարվել, քանի որ ամեն շաբաթ օր միության անդամները պարբերաբար հավաքվում են, և հավաքույթների ընթացքում առաջադրվում են պլաններ ու կայացվում որոշումներ: Վարչական խորհուրդը բաղկացած է 12 անդամներից, որանք ընտրվում են 2 տարի ժամկետով: Այդ տեղերի համար 2007 թ. ընտրվել էին 9, իսկ 2008 թ.՝ 3 հոգի: 2007 թ. 9 տեղերը պետք է նորից դրվեն քվեարկության: Ներկայումս բացակա Դիկրանը և Քրիստինեն ցանկություն են հայտնել մնալ ՎԽ անդամներ: Ներկաները միաձայն որոշեցին իրենց պաշտոններում երկարացնել վարչական խորհրդի նախկին անդամներին:

Ընդհանուր ժողովը միաձայն որոշեց.

1) 2009/2010 թթ. միության անդամավճարների գումարը թողնել անփոփոխ. 15 €՝ընտանիքից

des Femmes 2010 avec *Caramel* et *Ententes des cultures* (rechercher des fonds auprès des habitants pour le financement de ce projet) ;

. Poursuivre les cours d'arménien et les renforcer ;

. Organiser une fête des alphabets début juillet dans le cadre de nos quartiers d'été ;

. Organiser un atelier de danse dans le même cadre ;

. Participer à l'atelier sur le pain en fabriquant du *lavache* ;

. Proposer des cours de français aux adultes arméniens, surtout des mamans demandeuses, pour faciliter leur apprentissage de la langue. Narine et Tatevik sont d'accord pour assurer ces cours à tour de rôle. L'association fera une demande de salle pour cette activité.

. Une visite guidée par an de : Lille, Mons en Barœul ou d'une ville très proche. Cette visite sera préparée au préalable dans dans le cadre du cours de français.

. La messe de Noël arménien ou de Pâques 2011 ;

. Une autre manifestation pour le mois de septembre 2010 (pièce d'Avédikian, spectacle autour des chansons d'Aznavour…);

. Tenir un stand au cours de la Braderie de Lille et pourquoi pas lors de la fête de la musique.

Les membres ont aussi décidé d'entreprendre une démarche auprès de la préfecture afin de savoir si l'association pourrait bénéficier de la taxe d'apprentissage au titre de l'enseignement dispensé en arménien et en français.

Le procès-verbal de cette AG est consultable sur demande chaque samedi lors des permanences de l'association.

Louisette Lamarche

RENCONTRE ARMÉNO-TURQUE AUTOUR DU FILM *NOUS AVONS BU LA MÊME EAU* À BRUXELLES

Le 8 février dernier à Bruxelles, le bureau des étudiants de Sciences politiques de l'Université Libre de Bruxelles, le *Cercle du libre examen* et le CEVIPOL (Centre d'étude de la vie politique) avaient invité Serge Avédikian et Cengiz Aktar à venir animer un débat autour du film *Nous avons bu la même eau*. Ayant vu ce film et fait connaissance avec son auteur, nous ne pouvions manquer ce nouveau rendez-vous.

Plus de 60 personnes étaient présentes à la présentation du film
Ավելի քան 60 հանդիսատես ներկա էր ֆիլմի ցուցադրմանը

Le Docteur Cengiz Aktar est professeur à l'Université des Sciences économiques et administratives de Bahçeşehir à Istanbul. Il dirige le département des relations avec l'Union européenne. Il a été présenté à Serge Avédikian à Istanbul par Hrant Dink, Arménien de Turquie, dont il était l'ami. La soirée à commencé par un vibrant hommage à cet homme, journaliste, créateur et responsable

2) թերթի գինը սահմանել՝ հաշվի առնելով էջերի քանակը և ինքնարժեքը՝ գումարած 0,5–1 €, որը կծածկի այն համարների ծախսերը, որոնք անվճար բաժանվում են գրադարաններին, քաղաքի ավագանու անդամներին, այլ միություններին:

3) հայերենի դասընթացների վարձը՝ ամիսը 5 € յուրաքանչյուր երեխայի համար, թողնել անփոփոխ. նրանց հաճախելը չի առնչվում միությանը անդամագրվելու փաստի հետ:

Միության անդամները կարծիքներ փոխանակեցին հաջորդ տարվա անելիքների մասին.

. Կրկին հանդիպել Սերժ Ավետիքյանի հետ Բրյուսելում, փետրվարի 8-ին,

. Ներկա լինել փետրվարի 20-ի Կապել լա Գրանդի շախմատի միջազգային մրցաշարին, որտեղ խաղալու են նաև օլիմպիական կրկնակի չեմպիոն Հայաստանի ազգային հավաքականի մի քանի անդամներ և Ալլայի որդին՝ գրոսմայստեր Տիգրան Դերմանյանը,

. «Կարամել» և «Մշակույթների համերաշխություն» միությունների հետ մասնակցել 2010 թ. Կանանց Տոնի կազմակերպմանը, մեզ վրա վերցնել Փարիզի էքսկուրսիան և նրա հետ կապված ֆինանսավորումը՝ «Բնակիչների մասնակցություն հիմնադրամի» օժանդակությամբ,

Շարունակել և կատարելագործել հայերենի դասընթացները,

. Հուլիսի սկզբին կազմակերպել Այբուբենի տոն՝ ամառվա թաղամասային խմբակների շրջանակներում,

. Նույն շարքից փորձել կազմակերպել պարի խմբակ,

. Մասնակցել «հացի» խմբակին՝ թխելով լավաշ,

. Առաջարկել ֆրանսերենի դասընթացներ, որոնք կհեշտացնեն ֆրանսերենի յուրացումը մեծահասակների և, հատկապես, մայրերի համար, ովքեր բազմիցս դիմել են այդ առաջարկով: Նարինեն և Տաթևիկը առաջարկում են հերթով վարել այդ դասերը: Այս նպատակով դիմել քաղաքապետարան, որպեսզի մեզ հատկացնեն երկրորդ դասասենյակը:

. Տարին մեկ անգամ կազմակերպել էքսկուրսավարով պտույտ Լիլում, Մոնս ան Բարոլում կամ մեկ ուրիշ մոտակա քաղաքում: Նախօրոք պատրաստվել դրան, հատկապես ֆրանսերենի դասընթացների ժամանակ:

. Կազմակերպել հայկական Սուրբծննդյան կամ Զատիկի պատարագներ,

. 2010 թ. սեպտեմբերին մեկ այլ միջոցառման կազմակերպում (Ավետիքյանի պիեսը, ներկայացում՝ բաղկացած Ազնավուրի երգերից...),

. Ունենալ մեր տաղավարը Լիլի Տոնավաճառում և, ինչու՞ չէ, Երգի տոնի ժամանակ:

Անդամները որոշում կայացրեցին նաև դիմել պրեֆեկտուրային՝ տեղեկություն ստանալու համար, թե արդյո՞ք մեր միությունը կարող է օգտվել պրոֆտեխուսուցման հարկից՝ հաշվի առնելով մեր հայոց և ֆրանսերեն լեզուների դասընթացների փաստը:

Ցանկության դեպքում, ընդհանուր ժողովի արձանագրությանը կարելի է ծանոթանալ ամեն շաբաթ օր՝ միության պարբերական հավաքների ժամանակ:

Լուիզեթ Լամարշ

ՀԱՅ -ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ «ՄԵՆՔ ՆՈՒՅՆ ՋՈՒՐՆ ԵՆՔ ԽՄԵԼ» ՖԻԼՄԻ ՇՈՒՐՋԸ՝ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

Փետրվարի 8-ին Բրյուսելի Բաց Համալսարանի քաղաքական գիտությունների ֆակուլտետի ուսանողական կոմիտեն, «Ազատ քննություններ» խմբակը և ՍԵՎԻՊՈԼ-ը (Քաղաքական կյանքի հետազոտման կենտրոն) հրավիրել էին Սերժ Ավետիքյանին և Չենգիզ Աքթարին՝ մասնակցելու «Մենք նույն ջուրն ենք խմել» կինոնկարի քննարկումներին: Արդեն ծանոթ լինելով ֆիլմին և նրա հեղինակի հետ՝ մենք չէինք կարող բաց թողնել այս նոր հանդիպումը:

du journal bilingue (arménien et turc) *Agos*, assassiné devant les locaux de son journal le 19 janvier 2007. Hrant Dink a travaillé pendant des années à la réconciliation des sociétés civiles turque et arménienne et à la reconnaissance du génocide.

Cengiz Aktar est l'un des auteurs de la pétition du pardon aux Arméniens qui a été signée par 95 % des intellectuels turcs. En seulement quelques jours elle a réuni plus de 30 000 signatures de Turcs (voir site internet www.ozurdiliyoruz.com).

Après la diffusion du film, Cengiz Aktar a rappelé la mutation politique de la Turquie depuis 1983 vers plus de démocratie. En 1999, cette transformation et la réaffirmation de la volonté de la Turquie d'intégrer l'Union européenne ont permis d'ouvrir le débat sur de nombreuses questions dont : le problème kurde, la place de l'Islam dans la société, les relations avec les pays voisins et la question arménienne. Aujourd'hui en Turquie la liberté de parole prend une place qui était inespérée avant 1999. Le génocide arménien est évoqué chaque jour d'une manière ou d'une autre dans ce pays.

Malgré les tabous et le négationnisme de l'enseignement officiel des autorités turques, il est actuellement possible pour toute personne curieuse de se faire une idée de la réalité des choses sur l'histoire des Arméniens en Turquie. Des travaux artistiques sur ce sujet naissent peu à peu dans le pays et en diaspora turque. Ils interpellent les consciences. La question essentielle est de savoir comment se parler entre communautés et non plus comment chaque communauté parle seule de son côté de cette histoire.



La couverture du livre de Cengiz Aktar *L'appel au pardon*
Չենգիզ Աքթարի «Ներման կոչ» գրքի կազմը

Les États ont créé des protocoles, ils ont commencé à ouvrir le débat. C'est une démarche très formelle, entreprise par des autorités nationales, vivement contestée par une partie de leurs populations. On ne sait pas ce que cela donnera au fond, mais pour Serge Avédikian l'essentiel n'est pas là. L'important est que les peuples se rencontrent, se parlent. Aujourd'hui beaucoup d'Arméniens d'Arménie comme de la diaspora se rendent en Turquie.

Le dialogue se noue peu à peu. Pour Cengiz Aktar : « Le djinn est sorti de sa bouteille et n'y rentrera plus ». Il reconnaît la violence de la révélation de l'histoire arménienne pour les Turcs par rapport au travail de négationnisme mis en place par l'État. Une jeune étudiante turque témoigne de sa difficulté à aborder ce sujet tellement tabou même dans sa famille.

Selon un dicton anatolien, « En osant dire ce que l'on désire, on entend enfin ce que l'on désirait ne pas entendre ». Et selon un dicton turc cité par Serge Avédikian, « Je crie de là où j'ai mal ». Ainsi, le cri a besoin d'être avant tout entendu pour trouver un soulagement.

Դոկտոր Չենգիզ Աքթարը Ստամբուլի Բահչեշեհիրի համալսարանի տնտեսագիտական և վարչական գիտությունների ֆակուլտետի պրոֆեսոր է: Նա ղեկավարում է Եվրոմիության հետ հարաբերությունների ամբիոնը: Աքթարը ծանոթացել է Սերժ Ավետիքյանի հետ իր ընկերոջ՝ Հրանտ Դինքի միջոցով: Երեկոն սկսվեց վերջինիս մեծարմամբ: Հրանտ Դինքը լրագրող էր, «Ագոս» երկլեզու (հայերեն և թուրքերեն) պարբերականի հիմնադիրը և գլխավոր խմբագիրը, ով սպանվեց իր խմբագրատան մուտքի դիմաց 2007 թ. հունվարի 19-ին: Երկար տարիներ նա աշխատել է հայ-թուրքական քաղաքացիական հասարակությունների մերձեցման և ցեղասպանության ճանաչման համար:

Չենգիզ Աքթարը հայերից ներողություն խնդրելու հայտարարագրի հեղինակներից է, որի տակ ստորագրել են թուրք մտավորականության 95 %-ը: Միայն մի քանի օրվա ընթացքում այս ստորագրահավաքին մասնակցեցին ավելի քան 30 000 թուրք (տե'ս www.ozurdiliyoruz.com ինտերնետային կայքը):

Ֆիլմի ցուցադրումից հետո Չենգիզ Աքթարը հիշեցրեց, որ 1983 թ. սկսած Թուրքիայի քաղաքականությունը զարգանում է ժողովրդավարության ճանապարհով: Այս վերափոխումը և 1999 թ. Թուրքիայի Եվրոմիությանը անդամակցելու ցանկության վերահաստատումը հնարավորություն տվեցին քննարկումներ սկսել բազմաթիվ հարցերի շուրջ, որոնց թվում էին՝ քրդական հարցը, մահմեդականության դերը հասարակության մեջ, հարաբերությունները հարևան երկրների հետ և հայկական հարցը: Թուրքիայում խոսքի ազատությունը հասել է մի այնպիսի աստիճանի, որի մասին 1999 թ. առաջ երազել անգամ չէր կարելի: Հայոց ցեղասպանության հարցը ամեն օր այս կամ այն կերպ շոշափվում է այս երկրում:

Չնայած թուրքական իշխանությունների որդեգրած արգելքներին և ժխտողական պետական քաղաքականությանը, այսօր յուրաքանչյուր հետաքրքրասեր թուրք հնարավորություն ունի Թուրքիայում հայերի իրական պատմության մասին պատկերացում կազմել: Այս երկրում և նրա սփյուռքում հետզհետե ի հայտ են գալիս արվեստի ստեղծագործություններ, որոնք խորհելու առիթ են տալիս: Գլխավոր հարցը ոչ թե նրանում է, թե ինչպե՞ս է յուրաքանչյուր ժողովուրդ խոսում ինքն իր և իր պատմության մասին, այլ թե ինչպե՞ս երկխոսություն սկսել երկու ժողովուրդների միջև:

Պետությունների միջև ստորագրվել են արձանագրություններ, որոնք դարձել են լայն քննարկումների առարկա: Սա իշխանությունների կողմից ձեռնարկած մի պաշտոնական քայլ է, որը չի վայելում իրենց ժողովուրդների մի մասի վստահությունը: Դեռ պարզ չէ, թե ինչ արդյունքի այն կհանգեցնի, բայց Սերժ Ավետիքյանի համար գլխավորը դա չէ: Կարևորն այն է, որ ժողովուրդները հանդիպեն և երկխոսեն: Այսօր Հայաստանի և սփյուռքի շատ հայեր են այցելում Թուրքիա:

Երկխոսությունը հետզհետե կայանում է: Չենգիզ Աքթարի կարծիքով «Ջինը դուրս է եկել շշից և այլևս ետ չի մտնի»: Նա ընդունում է այն փաստը, թե որքան դաժան է թուրքերի համար հայերի պատմության բացահայտումը՝ թուրքական պետության ժխտողական քաղաքականության պայմաններում: Մի երիտասարդ թուրք ուսանողուհի պատմեց այն դժվարության մասին, թե ինչպես կարելի է խոսել այս թեմայով, եթե անգամ իր ընտանիքում դա արգելված թեմա է:

Անատոլիական մի ասացվածք ասում է, որ «Երբ համարձակվում ես ասել այն, ինչ ցանկանում ես, ի վերջո լսում ես այն, ինչ չէիր ցանկանա լսել»: Սերժ Ավետիքյանը հիշեցրեց մեկ այլ թուրքական ասացվածք. «Ցավոտ տեղից է ճիչը գալիս»: Այսպիսով՝ ցավը թեթևացնելու համար նախևառաջ պետք է լսել ճիչը:

Հարկավոր է երկար բացատրական աշխատանք տանել: Դա ո՛չ սուգ պահելն է, ո՛չ էլ զոհերի թվի պարզ հաշվարկները: Այդ աղետից հասարակության ոչ մի ոլորտ (մարդկային հարաբերությունների, տնտեսական, քաղաքական և այլն) զերծ չի մնացել: Մեծ եղեռնից հետո տեղի ունեցավ տնտեսական փլուզում: Թուրքերն իրենք են ասում, որ «Անատոլիայի հողն աղազրկվեց»: Այդ ժամանակաշրջանին վերաբերող գիտական աշխա-

Un long travail pédagogique est à réaliser. Il est différent du travail de deuil ou de la simple comptabilisation des disparus. Tous ont pâti de cette même catastrophe et tous les aspects de la société ont été touchés : l'économie, les relations humaines, la politique… On a assisté à un véritable effondrement économique après la « Grande catastrophe » (nom donné au génocide par les Arméniens). Les Turcs disent eux-mêmes « qu'en Anatolie, on a enlevé le sel de la terre ». Des travaux scientifiques sur cette époque ont été menés sur l'ouest du pays, pas sur l'est qui encore aujourd'hui ne s'est pas remis de ces évènements et souffre d'une grande pauvreté.

Serge Avédikian a évoqué la « maladie génocidaire de la diaspora ». Dans ce cas, la réflexion part toujours du passé. Cela a une forte répercussion sur le présent et l'impossibilité du dialogue. Un jeune Arménien s'est alors insurgé pour demander : « Quel peuple peut mettre son histoire entre parenthèses au nom de son présent ? » Il critique la démarche des protocoles établie par les deux États. Serge Avédikian lui a dit que c'était juste une façon différente de dire les choses. Les protocoles ne sont pas intéressants. La population turque ne se sent pas concernée par la volonté de l'État de conclure ces protocoles. Une commission d'historiens des deux pays s'est réunie une seule fois, c'était une réunion d'officiels incapables de dialoguer. Par contre, il serait intéressant que cette commission puisse permettre d'ouvrir certaines archives, celles de l'armée turque ATASE, les archives de Boston et de Jérusalem.

Partir du présent permet d'avancer sans renier le passé. Les relations humaines vont reconstituer la mémoire. Cela ne viendra pas des politiques mais de la société civile. Le gouvernement pliera par sa conscience populaire.

Un jeune étudiant turc regrette l'absence de reconnaissance de la souffrance de certaines familles turques qui ont subi des massacres commis par des Arméniens. Pour Serge Avédikian, individuellement, un mort vaut un mort quelle que soit son origine. Mais la proportion des Arméniens disparus est sans commune mesure avec le nombre de Turcs décédés. Le nombre et l'extermination systématique justifient la qualification de génocide. Il ne faut pas que les Turcs d'aujourd'hui se sentent humiliés de reconnaître que quelques fous furieux ont pu à l'époque commettre de tels faits.

Cengiz Aktar rappelle qu'en quelques années 1,5 million d'Arméniens ont disparu de l'Anatolie. C'est un fait incontestable. Beaucoup de Turcs contemporains sont de bonne foi, ils ont subi une éducation qui les a menés vers une amnésie historique totale. Pour Serge Avédikian, la création de la nation est le pire fléau de l'humanité. En son nom des peuples se sont étripés du jour au lendemain alors qu'ils cohabitaient depuis des siècles. Les Arméniens n'ont pas été le seul peuple pourchassé. Les Araméens ont également subi le génocide.

L'attaché culturel de l'ambassade de Turquie souligne qu'aujourd'hui plus de 88 % des Turcs ont moins de 50 ans. À l'ère de l'urbanisation et de la migration des populations des campagnes vers les villes, la mémoire a tendance à se perdre. Les Turcs sont également traumatisés par l'histoire.

Cengiz Aktar souligne qu'il y a eu de nombreux justes parmi les Turcs. En 1923, il restait 300 000 Arméniens en Anatolie sans parler des convertis qui ont subi un véritable génocide culturel dans cette assimilation forcée. Le mot de génocide est insuffisant pour tout expliquer, l'annihilation des Arméniens a été une catastrophe pour l'Anatolie toute entière. Aujourd'hui il faut découvrir toute cette mauvaise mémoire pour pouvoir construire un futur ensemble.

Louisette Lamarche

տություններր նվիրված են Թուրքիայի արևմտյան, բայց ոչ արևելյան տարածքին, որը դեռ չի ապաքինվել այդ իրադարձությունների հետևանքներից և զարգացման մեծ կարիք ունի:

Arminé, Louisette, Alla, Serge Avédikian et Cengiz Aktar
Արմինեն, Լուիզեթը, Ալլան, Սերժ Ավետիքյանը և Չենգիզ Աքթարը

Սերժ Ավետիքյանն ընդգծեց սփյուռքում արմատացած ցեղասպանության զոհի բարդույթի մասին: Այս դեպքում մտածում ես՝ ելնելով անցյալից, որը ուժգին ազդեցություն է թողնում ներկայի վրա և անհնարին դարձնում երկխոսությունը: Մի երիտասարդ հայ ուսանող միջամտեց՝ հարցնելով, թե «Այդ ո՞ր ժողովուրդը կարող է հանուն ներկայի փակագծերի մեջ դնել իր պատմությունը»: Նա նաև քննադատեց երկու երկրների ստորագրած արձանագրությունները: Սերժ Ավետիքյանը պատասխանեց, որ դա միայն իրերի մասին խոսելու մեկ այլ ձև է: Արձանագրությունները հետաքրքիր չեն: Թուրք ժողովուրդն այն կարծիքին է, որ պետության կողմից նախաձեռնած և ստորագրած արձանագրությունները իրեն չեն վերաբերում: Միայն մեկ անգամ է հավաքվել երկու երկրների պատմաբանների հանձնաժողովը: Սա երկխոսության անընդունակ պաշտոնական ներկայացուցիչների մի հանդիպում էր: Այնուհանդերձ հետաքրքիր կլիներ, որ այդ հանձնաժողովը հնարավորություն ստեղծեր բացել որոշ արխիվներ, օրինակ՝ ԱԹԱՍԵ-ի թուրքական բանակի, կամ Բոստոնի և Երուսաղեմի արխիվները:

Երբ ելման կետը ներկան է, ապա հնարավորություն է ստեղծվում առաջ գնալու՝ առանց անցյալը ժխտելու: Մարդկային հարաբերությունները կվերականգնեն պատմական հիշողությունը, որը կգա ոչ թե քաղաքականությունից, այլ քաղաքացիական հասարակությունից: Կառավարությունը տեղի կտա հասարակական գիտակցության ճնշման տակ:

Մի երիտասարդ թուրք ուսանող ցավում էր, որ ոչ ոք չի խոսում հայերի կողմից կոտորածների ենթարկված թուրք ընտանիքների տառապանքների ճանաչման մասին: Սերժ Ավետիքյանի կարծիքով՝ մահը մահ է՝ անկախ ազգային պատկանելիությունից, բայց զոհված հայերի և թուրքերի թիվն անհամեմատելի է: Քանակը և պարբերաբար բնաջնջումները արդարացնում են ցեղասպանություն բառի կիրառումը: Պետք չէ, որ թուրքերն այսօր իրենց նվաստացած զգան՝ ճանաչելով, որ կատաղի խելահեղները ժամանակին կարող էին իրականացնել նմանատիպ գործողություններ:

Չենգիզ Աքթարը հիշեցրեց, որ մի քանի տարվա ընթացքում 1,5 միլիոն հայեր վերացան Անատոլիայից: Սա անառարկելի փաստ է: Ժամանակակից շատ թուրքեր, որոնց ստացած կրթությունն ու դաստիարակությունը զուրկ է պատմական հիշողությունից, բարյացակամ են տրամադրված: Սերժ Ավետիքյանի հա-

Post scriptum

Le 12-13 mai, le festival de cinéma de Cannes, a décerné la *Palme d'Or* au film de Serge Avédikian *Histoire de chien*.

Les événements de ce film d'animation d'une durée de 15 minutes se déroulent en 1910, dans Empire ottoman. Après l'arrivée au pouvoir des Jeunes-Turcs et les massacres d'Adana, Constantinople a été envahi par des chiens vagabonds. Pour se débarrasser de ces derniers, le pouvoir « higyéniste » a adopté une loi d'extermination de ces chiens selon laquelle environ 30 000 d'entre eux seraient transportés dans une île désertique sans eau ni nourriture. Ils sont morts de famine ou mangés par leurs congénères.

Selon les critiques et les cinéastes, un parallèle indirect a été fait avec le génocide des Arméniens par le biais de ce film, car le style et la manière de procéder de l'Empire ottoman ont été les mêmes.

À cette occasion nous félicitons le talentueux metteur en scène et comédien Serge Avédikian en lui souhaitant de nouveaux succés créatifs.

Jacqueline Kasparian

LA FÊTE DES FEMMES 2010

Les Arméniennes tiennent tout particulièrement à cette fête spécialement mise en valeur en Arménie. À ce titre, l'association *Ararat* a recherché un partenariat à Mons en Barœul pour partager ce moment.

L'association *Caramel* en la personne de son directeur Monsieur Raveau nous a immédiatement dit « Oui » et ensemble, avec Delphine, l'animatrice des ateliers adultes, nous avons cherché à associer d'autres personnes à cette manifestation. L'*Association de la Mosquée de Mons en Barœul* nous avait devancés dans cette fête en organisant, dès 2009, une après-midi d'animation et de réflexion pour la communauté des femmes musulmanes. Proposant une nouvelle manifestation en 2010, elles ont tout de suite accepté l'idée de nous fédérer pour proposer plusieurs temps forts au cours de la semaine du 7 au 13 mars. Le programme de cette semaine a donc été riche et varié.

Le 7 mars l'association *Entente de culture* nous a proposé une après-midi de musique et de réflexion sur le « bien-être et le mieux-vivre suivant la spiritualité musulmane ». Après une intervention de Mesdames Meziani, Présidente de l'association *Pour la reconnaissance des droits et libertés de la femme musulmane*, et Belghiti sur le bilan d'une enquête sur les mariages forcés dans la métropole, Madame Lakhdar, conseillère conjugale, thérapeute et auteur de différents ouvrages nous a proposé de nous questionner sur nos valeurs : source d'équilibre et de bien-être. Au-delà de l'« être » et de l'« avoir », elle a insisté sur le « faire » qui permet de se construire et de s'estimer, et sur l'« appartenir », qui renvoie à la fraternité et à l'identité, et à la la place que l'on occupe dans la société. Elle nous a toutes invitées à nous prendre en main afin de mieux nous construire individuellement et collectivement quelle que soit l'ampleur du projet à entreprendre. L'essentiel étant d'avancer pas à pas sans vouloir aller trop vite, de respecter notre propre rythme. Après avoir partagé les gâteaux préparés par les dames, le groupe *Anouar* a interprété quelques chants. Ont suivis des témoignages sur l'apprentissage du Coran. Ensuite a été présenté le résultat du concours de gâteaux. Plusieurs centaines de femmes étaient présentes et attentives, dont quelques Arméniennes qui, bien que ne partageant pas la même culture, ont trouvé dans cette manifestation de la convivialité et des valeurs universelles.

Le 9 mars, le foyer de personnes âgées *Les cèdres* a accueilli le centre d'information du droit des femmes pour un dé-

մար ազգերի ստեղծումը մարդկության վատթարագույն աղետն է: Հանուն դրա, մի օր ժողովուրդները հակադրվել են իրար, չնայած նրան, որ դարեր շարունակ ապրել են կողք կողքի: Հայ ժողովուրդը միակ հալածվածը չէ: Ասորիները նույնպես ենթարկվել են ցեղասպանության:

Թուրքական դեսպանության մշակույթի գծով կցորդը նշեց, որ թուրքերի ավելի քան 80 %-ի տարիքը չի անցնում 50-ից: Ուրբանիզացիայի և գյուղից դեպի քաղաք բնակչության միգրացիայի ժամանակաշրջանում հիշողությունը մոռացվելու հատկություն ունի: Պատմությունը թուրքերի նկատմամբ նույնպես դաժան է եղել:

Չենգիզ Աքթարը ընդգծեց, որ թուրքերի մեջ արդար մարդիկ շատ են եղել: 1923 թ. Անատոլիայում մնացել էին 300 հազարից ավելի հայեր՝ չհաշված մահմեդականություն ընդունածներին, որոնք ենթարկվեցին իսկական մշակութային ցեղասպանության, այսինքն՝ բռնի ձուլման: Ցեղասպանություն բառը բավական չէ, որպեսզի ամեն ինչ բացատրվի: Հայերի բնաջնջումը մի աղետ էր ողջ Անատոլիայի համար: Այսօր հարկավոր է ջրի երես հանել այդ ամբողջ «վատ հիշողությունը», որպեսզի հնարավոր լինի միասին կառուցել ապագան:

Լուիզեթ Լամարշ

Հետգրություն

Մայիսի 12-13-ին Կաննում կայացած կինոփառատոնում Սերժ Ավետիքյանի «Շան պատմությունը» ֆիլմը արժանացավ «Ոսկե արմավենի» մրցանակին:

Տասնհինգ րոպե տևողությամբ անիմացիոն շարժանկարի իրադարձությունները ծավալվում են 1910 թ. Օսմանյան կայսրությունում: Երիտթուրքերի իշխանության գալուց և Ադանայի ջարդերից հետո Կ. Պոլիսը լցվում է անօթևան շներով: Նրանցից ազատվելու համար «մաքրասեր» իշխանավորները շների ոչնչացման ծրագիր են ընդունում, հավաքում և մոտ 30 հազար շներին լցնում են քաղաքից հեռու անմարդաբնակ ու անջուր կղզի, որպեսզի սովից իրար ուտեն ու սատկեն:

Քննադատների ու կինոգետների կարծիքով՝ այս ֆիլմի միջոցով անուղղակի ներկայացվում է Հայոց ցեղասպանությունը, քանզի օսմանյան կայսրության ձեռագիրն ու գործելաոճը նույնն էր: Մրցանակի առիթով շնորհավորում ենք տաղանդաշատ բեմադրիչ-դերասան Սերժ Ավետիքյանին և մաղթում ստեղծագործական նորանոր նվաճումներ:

Ժակլին Կասպարյան

2010 Թ. ԿԱՆԱՆՑ ՏՈՆԸ

Կանանց տոնը, որն առանձին շուքով է նշվում Հայաստանում, շատ հոգեհարազատ է հայ կանանց: Այս կապակցությամբ «Արարատ» միությունը գործընկերներ էր որոնում Մոնս ան Բարոլ քաղաքում, որոնց հետ հնարավոր կլիներ միջոցառում կազմակերպել:

«Կարամել» միության տնօրեն պարոն Ռավոն անմիջապես դրական պատասխան տվեց: Մեծահասակների խմբակների պատասխանատու Դելֆինի հետ մենք սկսեցինք որոնել այլ մասնակիցներ՝ այս միջոցառման մեջ նրանց ընդգրկելու նպատակով: «Մոնս ան Բարոլ քաղաքի մզկիթ» միությունը մեզանից առաջ էր անցել. դեռ 2009 թ., այս տոնի առթիվ, նա ցերեկույթ էր կազմակերպել՝ նվիրված մահմեդական կանանց խնդիրներին: Հանդիպումը եզրափակվել էր մտքերի փոխանակությամբ: Նախատեսելով մի նոր ծրագիր 2010 թ.՝ նրանք անմիջապես ընդունեցին մեր առաջարկը: Պայմանավորվեցինք միասին անցկացնել միջոցառումների մի շարք, որը պետք է սկսվեր մարտի 7-ին և վերջանար 13-ին: Տոնական շաբաթն այսպիսով խոստանում էր լինել հարուստ և բազմաբնույթ:

Մարտի 7-ին «Մշակույթների համագործակցություն» միությունը կազմակերպել էր երաժշտական ցերեկույթ, որի ընթացքում մտքեր փոխանակվեցին թե «ինչպե՞ս լավ զգալ և ներդաշնակ ապրել՝ մահմեդական հոգևոր սկզբունքներին համահունչ»: Տիկնայք Բելգիթիի և «Մահմեդական կանանց իրավունք-

La statue du passe-muraille crée par Jean Marais et la statue de Dalida dans le quartier de Monmartre Ժան Մարեի ստեղծած «Պատի միջով անցնող մարդը» և Դալիդայի հուշարձանները Մոնմարթր թաղամասում

bat sur la relation mère/fille. Une vingtaine de personnes d'âges, de cultures et d'expériences divers ont échangé sur leur expérience en la matière. La richesse et la sincérité des débats nous ont toutes et tous touché. Ont été abordés notamment les différences d'appréciations entre générations, la question de l'éloignement avec l'arrivée à l'âge adulte des enfants, les effets de l'indépendance physique et financière des femmes d'aujourd'hui, la difficulté et la pudeur de dire « Je t'aime » à ses enfants, les qualités d'une bonne mère, la question des remariages, la difficulté de trouver la bonne distance entre parents et enfants, l'éducation dure ou non, la place du père et des grand-parents…

Le 11 mars, 26 de ces dames ont pris la route de la région parisienne. Nous sommes parties après 7 heures du matin du parvis de l'hôtel de ville de Mons en Barœul. Après environ trois heures de route nous sommes arrivées au château de Rueil-Malmaison où nous attendaient nos conférenciers sur deux thèmes : « Découvrez la Malmaison » et « Une journée à la Malmaison avec Joséphine ».

À travers ce site extraordinairement bien conservé et mis en valeur, nous avons pu apprendre comment les femmes de cette catégorie sociale et de ce temps organisaient leur quotidien. Puis nous avons regagné Paris, au pied de la butte Montmartre. En fonction des goûts de chacune nous avons pu faire :

- un petit circuit autour de différents sites : la Basilique bien sûr, la place du Tertre et ses peintres, la statue de Dalida, le cabaret du *Lapin agile* et les vignes de Montmartre, la statue du passe-muraille crée par Jean Marais place Marcel Aymé, le Moulin de la Galette et le Mur des « Je t'aime » place des Abbesses.
- du shopping,
- découvrir les boutiques de tissus et d'accessoires.

Le retour à Lille s'est fait sans encombre après un petit passage à la tour Eiffel.

Pendant le trajet, nous avons pu découvrir le spectacle de la troupe de danse arménienne *Navasart*, et un extrait des documentaires de Titouan Lamazou *Femmes du monde*. Celles qui n'étaient pas trop fatiguées, on pu voir également le film *Un monde presque parfait* sur un atelier de confection pour dames après-guerre avec Zabou Breitman et Simon Abkarian. Nous étions de retour à Mons en Barœul vers 21h30.

Le 12 mars dans l'après-midi à *Caramel* une quinzaine de dames ont pu découvrir les précieux conseils de beauté au naturel d'une esthéticienne experte. La simplicité et la convivialité étaient au rendez-vous. Les éclats de rire ont été nombreux, chacune posant ces petites questions toutes bêtes et très personnelles aux-

ների և ազատությունների ճանաչման» միության նախագահ Մեզիանիի՝ Լիլի ագլոմերացիայում հարկադիր ամուսնությունների վերաբերյալ սոցիալական հարցումների արդյունքների մասին ելույթներից հետո ամուս նական հարցերով խորհրդատու, թերապևտ և տարբեր աշխատությունների հեղինակ տիկին Լախդարն առաջարկեց խորհել այն արժեքների մասին, որոնք հոգեկան հավասարակշռության և լավ ինքնազգացողության գրավական են: Բացի «լինել»ուց և «ունենալ»ուց, նա հատուկ ընդգծեց «անել»ը, որը հնարավորություն է տալիս զարգանալու և հարգելու ինքդ քեզ, և «պատկանել»ը, որը կապված է փոխօգնության և ինքնության հետ: Նա նաև նշեց հասարակության մեջ իր տեղը զբաղեցնելու կարևորության մասին: Անձնական և հասարակական կյանքում կայանալու գործում տիկին Լախդարը կոչ արեց, որ նախաձեռնությունը մենք պետք է ինքներս վերցնենք մեզ վրա՝ անկախ ակնկալիք ծրագրերի ծավալից: Կարևորը քայլ առ քայլ առաջ գնալն է, առանց ավելորդ շտապելու՝ հաշվի առնելով սեփական հնարավորությունները: Կանանց թխած կարկանդակները համտեսելուց հետո «Անուար» համույթը կատարեց մի քանի երգեր: Այնուհետև հավաքվածներն իրենց տեսակետները հայտնեցին Ղուրանի ուսուցման վերաբերյալ: Հետո հայտարարվեցին խմորեղենի մրցույթի արդյունքները: Միջոցառմանը ներկա էր մի քանի հարյուր կին, այդ թվում՝ նաև հայուհիներ: Հեռու լինելով մահմեդական մշակույթից՝ վերջիններս բարձր գնահատեցին կազմակերպված միջոցառման ջերմ մթնոլորտը՝ համամարդկային արժեքների շուրջ:

Մարտի 9-ին «Մայրիներ» ծերանոցում բացվել էր տեղեկատվական կենտրոն՝ կանանց իրավունքների վերաբերյալ: Նրա շրջանակներում տեղի ունեցավ բանավեճ «Մայրեր և դուստրեր» թեմայով: Տարբեր տարիքի, փորձի և ազգության մոտ երկու տասնյակ մասնակիցներ մտքեր փոխանակեցին այս թեմայի շուրջ: Անկեղծ ու բազմակողմանի բանավեճը հուզեց բոլորիս: Մասնավորապես շոշափվեցին հետևյալ հարցերը՝ սերունդների պատկերացումների և ընկալումների տարբերությունները, ծնողների և հասունացման տարիքում գտնվող երեխաների միջև անջրպետի գոյացումը, ժամանակակից կանանց ֆիզիկական ու ֆինանսական անկախացումից բխող հետևանքները, երեխաներին «Ես քեզ սիրում եմ» ասելու դժվարությունը և անհարմարությունը, լավ մորը բնորոշ հատկանիշները, կրկնակի ամուսնությունների հետ կապված հարցերը, ծնողի և զավակի միջև օպտիմալ հեռավորություն գտնելու դժվարությունը, խիստ կամ մեղմ դաստիարակությունը, հոր և տատիկ-պապիկների դերն ընտանիքում...

Մարտի 11-ին քսանվեց կին ճանապարհվեցին դեպի մերձփարիզյան շրջան: Մեկնեցինք առավոտյան ժամը 7-ին՝ Մոնս ան Բարոլի քաղաքապետարանի մերձակա հրապարակից: Երեք ժամ հետո հասանք Ռուեյ-Մալմեզոնի ամրոց, որտեղ մեզ սպասում էին էքսկուրսավարները: Պատվիրված թեմաները երկուսն էին՝ «Մալմեզոնի պատմությունը» և «Մեկ օր Մալմեզոնում՝ Ժոզեֆինայի հետ»:



Le Mur des « Je t'aime » «Ես քեզ սիրում եմ»ների պատը

quelles nous ne trouvons pas vraiment de réponses dans nos magazines. Toutes ont pu mettre en pratique les recettes et découvrir que les gestes et les produits les plus simples sont les meilleurs. Les participants ont redemandé d'autres séances sans attendre la prochaine Fête des femmes.

La dernière halte du groupe de femmes à Paris
Կանանց խմբի փարիզյան վերջին կանգառը

Enfin, le 13 mars, la semaine s'est terminée sur une après-midi de présentation des ateliers des parents de *Caramel* (cuisine, couture…). Les membres de l'association *Ararat* ont pu participer à cette manifestation. Nous avons restitué notre expérience et pris date pour l'année 2011. Un superbe défilé de mode avec les créations des dames et de la couturière, qui anime l'atelier, a clos cet après-midi.

Louisette Lamarche

LE MONDE VU PAR UNE ARMÉNIENNE

Notre temps est compliqué et obscur… Nous, les Arméniens, en cette période très difficile pour le monde entier, essayons de nous orienter et prendre le bon cap pour notre petit bateau qui s'est écrasé à maintes reprises dans des vagues furieuses et de rudes roches. Mais il n'a pas encore coulé et continue toujours son chemin en aspirant à accoster sur une côte paisible de rêve. Il est évident que nous sommes des marins inexpérimentés, mais, par chance, nous sommes dotés d'une persévérance nationale et d'une détermination grâce auxquelles notre petit bateau battu par le vent flotte encore.

Nous sommes toujours marqués par l'arrivée du printemps qui, par le réveil et l'encouragement de la nature, rend fou, donne la naissance à la vie et participe à la création. Mais, hélas, dans les âmes des Arméniens le miracle de l'apothéose du printemps est gâché par une douleur et une mémoire inconsolables, qui se rouvrent et s'enflamment en même temps que la floraison printanière...

Le 24 avril ... 1915 ...

« C'est le printemps, il a neigé… »

95 ans se sont écoulés, presqu'un siècle entier, mais la douleur est restée, s'est enracinée, a fleuri et s'est diffusée dans le monde entier. À l'arrivée de chaque printemps elle se fait sentir dans tous les coins du monde où a posé le pied le pèlerin arménien. Quand le crime n'est pas condamné, reste impuni, il se répand et prend davantage d'ampleur. Le crime qui a fait couler le sang n'a pas de délai de prescription. Le cœur arménien porte toujours la douleur de la Grande catastrophe arménienne du siècle dernier.

Բացառիկ ձևով պահպանված և ներկայացված այցելավայրը մեզ հնարավորություն տվեց ճանաչել, թե ինչպե՞ս են այս սոցիալական խավի կանայք կազմակերպել իրենց առօրյան: Այնուհետև ուղևորվեցինք Փարիզ՝ Մոնմարտրի թաղամաս: Մեզանից յուրաքանչյուրն ըստ իր ճաշակի և ցանկության հնարավորություն ունեցավ՝

. կարճատև շրջագայություններ կատարել դեպի տարբեր զբոսավայրեր. իհարկե՝ տաճար, Թերթրը հրապարակ իր նկարիչներով, Դալիդայի կիսանդրի, «Ճարպիկ ճագարը» կաբարե, Մոնմարտրի խաղողի այգիներ, Ժան Մարեի ստեղծած «Պատի միջով անցնող մարդը» հուշարձան, Մարսել Էմեի հրապարակում գտնվող Գալեթի հողմաղաց, «Ես քեզ սիրում եմ»ների պատ՝ Աբեսների հրապարակում,

. կատարել գնումներ,

. այցելել կտորեղենի և տարբեր մանրավաճառների խանութներ:

Էյֆելյան աշտարակի մոտ կարճատև դադարից հետո մենք բարեհաջող վերադարձանք Լիլ: Ճանապարհի ընթացքում դիտեցինք «Նավասարդ» հայկական պարի համույթի համերգը և մի հատված Ցիտուան Լամազուի «Աշխարհի կանայք» վավերագրական կինոնկարից: Առավել դիմացկունները դիտեցին նաև «Գրեթե կատարյալ աշխարհ» ֆիլմը, որը նվիրված էր հետպատերազմյան շրջանում կանանց կարի մի փաբրիկայի պատմությանը: Գլխավոր դերերում նկարահանվել են Զաբու Բրեթմանը և Սիմոն Աբգարյանը: Երեկոյան 9.30-ին ժամանեցինք Մոնս ան Բարոլ:

Մարտի 12-ին «Կարամել»-ում կազմակերպված մի ցերեկույթի շրջանակներում տասնհինգ կին հնարավորություն ունեցան ծանոթանալու փորձագետ դիմահարդարի տված օգտակար խորհուրդներին, որոնք վերաբերում էին մարմնի և դեմքի խնամքի համար օգտագործվող բնական նյութերին: Մթնոլորտը շատ ջերմ էր ու պարզ: Մեզանից յուրաքանչյուրը տալիս էր իրեն հուզող այն հարցերը, որոնց պատասխանները հաճախ չենք գտնում ամսագրերում: Բոլորս կարողացանք մեզ վրա կիրառել ներկայացված բաղադրատոմսերը՝ մեկ անգամ ևս համոզվելով, որ ամենապարզ գործողությունները և նյութերը ամենալավն են: Ներկաները խնդրեցին կազմակերպել նոր հանդիպումներ՝ չսպասելով կանանց հաջորդ տոնին:

Վերջապես շաբաթ օրը՝ մարտի 13-ը, եզրափակվեց մի ցերեկույթով, որը կազմակերպվել էր «Կարամել»ի ծնողների խմբակների (խոհանոց, կար ու ձև...) ջանքերով: «Արարատ» միության անդամները նույնպես ներկա էին այդ միջոցառմանը, որի ընթացքում փորձեր փոխանակելուց հետո պայմանավորվածություն ձեռք բերվեց կրկին հանդիպել 2011 թ.: Ցերեկույթը եզրափակվեց նորաձևության հոյակապ ցուցադրումով: Ներկայացված հագուստներն ընդհանուր ջանքերով կարել էին կարի խմբակի ղեկավարուհին և մասնակցող կանանց:

Լուիզեթ Լամարշ

ԱՇԽԱՐՀԸ՝ ՀԱՅԻ ԱՉՔԵՐՈՎ

Ժամանակները խառն են ու խրթին... Եվ մենք՝ հայերս, ողջ աշխարհի համար այս դժվարին ժամանակահատվածում փորձում ենք կողմնորոշվել ու ճշմարիտ ուղիով վարել մեր փոքրիկ նավակը, որը բազում անգամներ ջարդուփշուր է եղել ամեհի ալիքների ու կարծր ժայռերի հետ բախվելով, բայց դեռ չի խորտակվել ու շարունակում է ընթացքը՝ երազանքի խաղաղ ափ գտնելու փափագով: Այն, որ մենք անփորձ նավավար ենք, ակնհայտ է բոլորին, բայց, բարեբախտաբար, մեզ աջակից է մեր ազգային համառությունն ու նպատակասլացությունը, սա դեռևս կանգուն է պահում մեր հողմահալած նավակը:

Ա՜խ, այս գարունը, որ բնության զարթոնքով և ոգեկոչմամբ խենթացնում է, կյանքի կոչում ու արարում: Բայց, ավա՜ղ, գարնանամուտի հրաշքը հայի հոգում աղարտվում է մի անամոք ցավով ու հիշողությամբ, որը վերստին բացվում ու բորբոքվում է ամեն գարնան ծաղկման արբունքի հետ...

Elle est une gifle foudroyante, une honte ineffaçable au front du monde civilisé. En conséquence du premier génocide programmé et organisé du monde, les nouveaux ont été projetés et ont vu le jour face à l'indifférence silencieuse des humains.

Le monument dédié aux victimes du génocide des Arméniens de 1915 à Erevan
1915 թ. հայոց ցեղասպանության զոհերին նվիրված հուշարձանը Երևանում

Les temps ont changé, le monde a changé. Voilà de nouveau un début de siècle qui porte en son sein une anxiété et une inquiétude. Il semble que la glace a bougé un peu créant une crevasse (est-ce à cause du réchauffement global de la planète ?). Notre « louche en papier », il est vrai, n'est pas devenu de « fer » et ne le deviendra jamais. Cependant, nous avons réussi au moins avec la pointe du pied à entrouvrir les portes que l'on croyait à jamais fermées devant le défunt patriarche, le Père Khrimian... et à servir à la table du monde la dite « Cause arménienne » comme un plat piquant qui serre la gorge. Certes, nous avons des réussites : plus de vingt pays du monde ont reconnu le fait irréfutable du génocide arménien perpétré par le gouvernement des Jeunes-Turcs.

De nos jours, la Cause arménienne continue sa lutte avec plus de diplomatie et nous, qui n'avons pas la souplesse de la diplomatie rusée turque, devons nous contenter de ce dont nous disposons en ce moment. Nous contenter, mais de quoi ? Qu'après un siècle de lutte on commence à nous consoler et à compatir ?... Que les super-puissances mettent sur leurs tables notre douleur qui n'est qu'une monnaie de change, et nous des marionnettes... ? Que le gouvernement de notre pays voisin criminel par ses jeux diplomatiques insidieux et rusés et par ses moyens dévoyés falsifie les faits historiques évidents et fait avorter tout projet de compréhension mutuelle et de coopération… ? Curieusement également c'est avant chaque date-anniversaire de la Catastrophe que la question du génocide arménien est soulevée dans les discours des dirigeants des grandes puissances et débattue dans les parlements de différents pays en nous donnant des promesses et de l'espoir. En tant que peuple crédule, nous y croyons immédiatement, nous nous enthousiasmons, nous nous exaltons et nous vantons... et tout cela se termine par un désarroi et une déception venus de nouveaux mensonges et tromperies. Une fois le jour commémoratif de la Douleur passé, les Grands oublient de nouveau leurs promesses et gèlent le processus reprenant leurs projets de partage du monde. Et les Arméniens restent une fois de plus sans rien et seuls avec leur douleur inapaisable.

Ապրիլի 24 ... 1915 թ. ...
«Գարուն ա, ձուն ա արել…»

Անցել է 95 տարի, համարյա մեկ դար, բայց ցավը մնացել է, ճղարձակել ու ծաղկել, դարձել է աշխարհասփյուռ ու ամեն գարունքի հետ մորմոքում է աշխարհի բոլոր ծագերում, որտեղ պանդուխտ հայն է հայտնվել: Երբ ոճիրը չի պատժվում, չի դատապարտվում, ապա այն ավելի է ահագնանում ու տարածվում: Արյան ոճիրը չունի վաղեմության ժամկետ: Անցած դարասկզբի Հայկական Մեծ Եղեռնը հավետ մնացող ցավ է հայի սրտում և շաչուն ապտակ, չջնջվող ամոթ՝ ողջ մարդկության ճակատին: Աշխարհում առաջինը ծրագրված ու կազմակերպված ցեղասպանության հետևանքով նորերը ծրագրվեցին ու իրագործվեցին՝ ի հեճուկս մարդկային քար անտարբերության:

Փոխվել են ժամանակները, փոխվել է աշխարհը, ու կրկին դարասկիզբ է, տագնապով ու անհանգստությամբ շնչող դարասկիզբ: Կարծես թե սառույցը տեղից մի քիչ շարժվել ու ճաք է տվել (գուցե պատճառը երկրագնդի համընդանուր տաքացու՞մն է): Մեր «թղթե շերեփը», ճիշտ է, «երկաթյա» չի դարձել ու չի էլ դառնա, բայց լուսահոգի հայրապետ Խրիմյան Հայրիկի առջև անհույս փակված դռները մեզ հաջողվում է գոնե կրնկի վրա մասամբ բացել... ու այսպես կոչված «Հայկական հարցը» աշխարհի սեղանին մատուցել որպես կոկորդին կանգնած կծու կերակուր: Իսկապե՛ս, ունենք ձեռքբերումներ. աշխարհի շուրջ քսան երկրներ արդեն ընդունել են երիտթուրքական կառավարության կազմակերպած Հայկական ցեղասպանության անժխտելի փաստը:

Հայ Դատն այսօր իր գործը շատ ավելի դիվանագիտորեն է անում, և մենք, որ չունենք թուրքական դիվանագիտության աղվեսային ճկունությունը, պետք է գոհանանք այսօրվա ունեցածով: Գոհանա՞նք, ինչո՞ւ: Նրա համար, որ մեկդարյա պայքարից հետո հիմա մեզ մի քիչ մխիթարո՞ւմ ու ցավակցո՞ւմ են... Իսկ գերտերություննե՞րը, որոնց սեղանին մեր ցավը ընդամենը խաղաքարտ է, իսկ մենք էլ՝ խամաճիկներ... Իսկ մեր դրկից հանցագործ երկրի կառավարությո՞ւնը, որը խեղաթյուրում է պատմական ակնհայտ փաստերը՝ իր նենգ ու խարդախ դիվանագիտական խաղերով ու զարտուղի ճանապարհներով վիժեցնելով փոխըմբռնման ու համագործակցման ցանկացած ծրագիր: Հետաքրքիր մի հանգամանք. Եղեռնի յուրաքանչյուր տարելիցից առաջ Հայոց ցեղասպանության հարցը բարձրացվում է գերտերությունների ղեկավարների ելույթներում և քննարկվում աշխարհի տարբեր երկրների խորհրդարաններում: Մեզ խոստումներ ու հույսեր են տրվում, մենք էլ՝ դյուրահավատ մի ժողովուրդ, անմիջապես հավատում ենք, ոգևորվում, ոգեկոչվում, պարծենում... ու հետո հիասթափվում ու հուսալքվում հերթական ստից ու խաբեությունից: Անցնում է հիշարժան Ցավի օրը, և Մեծ տերությունները կրկին մոռանում են տված խոստումները ու սառեցնում գործընթացը՝ ելնելով իրենց աշխարհաբաժանման ծրագրերից: Ու հայը կրկին մնում է դատարկաձեռն ու մենմենակ իր մրմռուն ցավի հետ:

Une montagne de fleurs en souvenir Հիշատակի ծաղիկների բլուրը...

Divisez, partagez, morcelez, fragmentez, découpez toute la planète, prenez le plus grand morceau du gâteau pour vos propres intérêts, estropiez le destin de toute l'humanité. En dépit de tout cela, tôt ou tard, le jour arrivera, celui de la victoire de l'âme de mon peuple qui a tant souffert, celui qui apportera la paix et le baume aux cœurs endoloris et blessés. Le monde n'appartient pas qu'aux puissants, chacun d'entre nous a sa part égale. Regardez bien et vous verrez que vous devenez vous-mêmes des marionnettes et que c'est à cause de vos pêchés et malignités que la Nature s'est révoltée aujourd'hui.

Qu'est-ce qui se passe dans le monde ?... Ce sont la douleur et souffrance humaines accumulées dans les entrailles de la Terre qui sont projetées au ciel et perturbent vos entreprises. Regardez bien : en un instant tout votre système inhumain a été paralysé. Ce n'est qu'un avertissement, réveillez-vous ! Nous, les simples mortels, nous avons bien vu et senti votre impuissance pitoyable et votre anxiété. Le volcan réveillé en Islande lointaine est la pierre de touche qui a dévoilé votre visage : les nations et peuples ne jouent aucun rôle dans vos jeux sales, ne parlez pas à leur place… N'exaspérez pas la Nature... Comprenez au moins maintenant que vous n'êtes pas les maîtres du monde, c'est Lui qui l'est, le Seul, l'Unique, le Suprême…

Susanna Mughnetsyan

Բաժանե՛ք, կիսե՛ք, կիսկսե՛ք, մասնատե՛ք, վերաձևե՛ք ողջ երկրագունդը, վերցրե՛ք կարկանդակի ամենամեծ կտորը, հանուն ձեր շահերի խեղեք ողջ մարդկության ճակատագիրը. միևնույնն է... Միևնո՛ւյնն է, գալո՛ւ է օրը, իմ տառապյալ ժողովրդի հոգու հաղթանակի օրը, ցաված ու վիրավոր սրտի բալասան ու խաղաղություն գտնելու օրը... Աշխարհը միայն ձերը չէ, այն հավասարաչափ բոլորինն է: Լա՛վ նայեք ու կտեսնեք, որ դուք եք խամաճիկները, և ձեր մեղքերի ու չարության պատճառով է, որ Մայր բնությունն է այսօր ապստամբել:

Այս ի՞նչ է կատարվում աշխարհում... երկրի ընդերքում կուտակված մարդկային ցավն ու տառապանքն է դուրս ժայթքում ու խափանում ձեր բոլոր ձեռնարկումները: Լա՛վ նայեք, ընդամենը մի վայրկյանում անդամալուծվեց ձեր ողջ մարդակուլ համակարգը: Սա ընդամենը զգուշացում է, սթափվե՛ք: Մենք՝ սովորական մահկանացուներս, լավ տեսանք ու զգացինք ձեր խղճուկ անզորությունն ու տագնապը: Հեռավոր Իսլանդիայի արթնացած հրաբուխը հենց այն փորձաքարն էր, որ բացահայտեց ձեր դեմքը. ազգերն ու ժողովուրդները ոչ մի դեր չունեն ձեր կեղտոտ խաղերում, մի՛ շահարկեք նրանց անունը... Մի՛ զայրացրեք Մայր բնությանը... Գոնե հիմա հասկացեք, որ դուք չեք աշխարհի տերերը, այլ լոկ Մեկը, Միակը՝ Ա՛մենաբարձյալը...

Սուսաննա Մուղնեցյան

UNE ÉTUDE LINGUISTIQUE SUR LA LANGUE ARMÉNIENNE

Dans le cadre de notre formation en complément FLE (formation en Français Langue Etrangère qui vise à préparer des formateurs de français pour des apprenants étrangers) à l'Université Charles de Gaulle Lille 3, nous avons été amenées à réaliser une étude linguistique sur une langue au choix. Cette étude linguistique visait à étudier à la fois la syntaxe de la langue choisie, en abordant des sujets comme l'ordre que les mots occupent le plus souvent dans une phrase simple, mais aussi la prosodie de la langue avec des questions portant sur l'accent des mots ou encore l'intonation des phrases.


Edwige DUGAS
Amélie HERBIN

Licence 3
Complément de formation FLE
Avril 2010

Syntaxe
L'ordre des mots d'un point de vue communicationnel

DEVOIR MAISON

LANGUE CHOISIE : L'ARMÉNIEN

La couverture du devoir maison d'Edwige et d'Amélie sur la langue arménienne
Էդվիժի և Ամելիի հայոց լեզվին նվիրված արտալսարանային աշխատանքի կազմը

ԼԵԶՎԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻՆ

Շառլ դը Գոլի անվան Լիլ3 համալսարանում մեր ուսման և ՖՕԼ-ի (ֆրանսերենը՝ օտար լեզու, որի նպատակն է պատրաստել օտարերկրացիների համար ֆրանսերեն լեզվի դասավանդման կադրեր) շրջանակներում մենք պետք է իրականացնեինք որևէ լեզվագիտական ուսումնասիրություն: Վերջինիս առարկան էր ինչպես ընտրված լեզվի շարահյուսությունը (օրինակ՝ բառերի ամենահաճախ հանդիպող հերթականությունը պարզ նախադասություններում), այնպես էլ առոգանությունը (բառերի շեշտադրությունը կամ նախադասությունների հնչերանգը):

Ուսումնասիրությունն ավելի շատ ունեցավ լեզվագիտական հարցման ձև: Մեր ընտրությունը կանգ առավ հայերենի վրա, քանի որ երկուսս էլ հետաքրքրվում էինք այդ լեզվով: Ընդհանուր պատկերացում կազմելու համար նախապես ծանոթացանք հայոց լեզվին նվիրված աշխատություններին՝ գրադարաններում և էլեկտրոնային ցանցում: Դրանից հետո լեզվագիտության դասախոսը մեզ բաժանեց տաս հարցից բաղկացած մի ցուցակ: Այս պահից սկսած մեր լեզվագիտական հարցումը կատարելու համար մենք սկսեցինք որոնել մի անձնավորության, որի համար հայերենը կլիներ մայրենի լեզու: Նա պետք է պատասխաներ մեր հարցերին և կարողանար արագ բացատրել հայոց լեզվի առանձնահատկությունները: Լիլ3 համալսարանի դոցենտ Գարիկ Գալստյանը սիրով համաձայնեց մեզ օգնել: Նախօրոք կազմած հարցաթերթիկների հարցերի նրա տված բոլոր պատասխանները ձայնագրեցինք ձայնագրիչի վրա: Մենք բավական հագեցած ժամանակ անցկացրեցինք և հայերենի մասին շատ բան սովորեցինք:

Պարոն Գալստյանի հետ հանդիպումից հետո մենք աշխատանքը բաժանեցինք երկուսիս մեջ: Ավելի ուշ շարադրեցինք վերջնական արդյունքները, որոնք պատասխանում էին մեր դասախոսի տված տաս հարցերին: Ամեն հարցին հարկավոր էր տալ հստակ պատասխան՝ բերելով մեկ կամ մի քանի օրինակներ հայոց լեզվից: Օրինակներ բերելու ձևաչափն այսպիսին էր. ընտրված լեզվով օրինակը, բացատրությունը, բառերի հերթականությունը, ֆրանսերեն թարգմանությունը:

Լեզվագիտական հարցման նպատակն էր խորհել մեզ անծանոթ մի օտար լեզվի օրինաչափությունների մասին: Ճիշտ այդպես էլ ֆրանսերեն սովորող օտարերկրացիները կարող են մտորել այդ լեզվի ձևաչափության մասին: Կատարված աշխա-

Sous forme de questionnaire, l’étude prenait plutôt la forme d’une enquête linguistique. Nous avons choisi de réaliser notre enquête sur l’arménien car cette langue nous intéressait toutes les deux. Nous avons alors préalablement consulté des ouvrages sur la langue arménienne, soit dans les bibliothèques, soit sur internet, afin d’en connaître les grandes caractéristiques. Suite à cela, notre professeur de linguistique nous a distribué une liste de 10 questions auxquelles nous devions répondre. À partir de là, afin de mener à bien notre enquête linguistique, il nous a fallu trouver un locuteur natif susceptible de répondre à nos questions, voire peut-être, capable de nous expliquer rapidement le fonctionnement de sa langue. MCF de notre université Monsieur Garik Galstyan a bien voulu se prêter au jeu. Nous avons donc enregistré Monsieur Galstyan à l’aide d’un magnétophone et lui avons posé toutes les questions nécessaires que nous avions préalablement définies à travers un questionnaire détaillé. Nous avons passé un très bon moment, et avons appris beaucoup sur l’arménien !

Une fois l’entretien terminé avec Monsieur Galstyan, nous nous sommes réparties le travail et avons rédigé un dossier final qui répondait aux 10 questions que nous posait notre professeur. Pour chaque question, nous devions en donner clairement la réponse et appuyer cette réponse par un ou plusieurs exemples dans la langue choisie. Il fallait organiser chaque exemple donné de la manière suivante : exemple dans la langue choisie, glose, ordre des mots, traduction en français.

Le but de cette enquête linguistique a été de nous faire réfléchir sur le fonctionnement d’une langue qui nous est étrangère, tout comme des apprenants étrangers peuvent réfléchir sur le fonctionnement du français lorsqu’ils apprennent cette langue. Elle nous a aussi permis d’approfondir ce qui a été vu dans le cadre des cours de linguistique, étant donné que les questions de l’enquête portaient principalement sur des thèmes et notions abordés par le professeur durant l’année scolaire.

Ce travail de linguistique a été très enrichissant pour chacune d’entre-nous, tant au niveau de la linguistique, qu’au niveau des recherches à effectuer pour mener à bien notre enquête. Ce fut pour nous très intéressant de rencontrer un locuteur natif et de découvrir la belle langue de ce petit pays.

Amélie et Edwige

տանքը նաև հնարավորություն տվեց ավելի խորացնել լեզվագիտության դասընթացների ժամանակ մեր ստացած գիտելիքները՝ հաշվի առնելով այն, որ հարցերը հիմնականում վերաբերում էին մեր դասախոսի՝ ուսումնական տարվա ընթացքում դասավանդած թեմաներին և հասկացություններին:

Լեզվագիտական այս աշխատանքը մեզանից յուրաքանչյուրի համար բավական հարստացնող էր ինչպես լեզվագիտական, այնպես էլ ուսումնասիրական առումով: Հանդիպումը հայախոսի հետ մեզ համար շատ հետաքրքիր էր, որը և հնարավորություն տվեց բացահայտելու այս փոքր երկրի գեղեցիկ լեզուն:

Les auteurs de l’étude Edwige et Amélie, étudiante de l’Université de Lille3
Ուսումնասիրության հեղինակներ, Լիլ3 համալսարանի ուսանողուհիներ Էդվիժն ու Ամելին

2010 թ. սեպտեմբերի 11-ին՝ ժամը 20.00 : 2010 թ. ամռանը Հայաստանում կատարած խոստումնալից շրջագայությունից հետո «Արարատ, իմ սեր» ներկայացումը կցուցադրվի «Կազինո դը Պարի»ում: Այն Ֆրանսիայի հայ երիտասարդական միության (JAF) ազգագրական «Արաքս և Սասուն» համույթի նոր աշխատանքն է, որն առաջին անգամ ներկայացվել է 2009 թ.՝ Մարսելում: Երկու ժամ տևող շոուի մեջ ներգրավված են 40 պարողներ և 25 երաժիշտներ՝ կենդանի կատարմամբ: Այս նոր եզակի ներկայացումը համախմբում է ազգագրական և արդիական ոճերը. նորացված բեմականացում, անսպասելի երաժշտական և խորեոգրաֆիկ միաձուլում: «Արարատ, իմ սեր»ը վերարտադրում է հայ ժողովրդի կյանքը՝ ինչպես ուրախության, այնպես էլ տխրության պահերով:

Le 11 septembre 2010, à 20h00 : après une tournée prometteuse en Arménie à l’été 2010, *Ararat mon amour* débarque le 11 septembre au Casino de Paris. C’est le nouveau spectacle de l’ensemble traditionnel de la Jeunesse Arménienne de France (JAF), *AraxeSassoun*, qui a été présenté à Marseille en 2009. 40 danseurs et 25 musiciens en live sur scène, pour un show de deux heures. Unique en son genre, ce nouveau spectacle transcende tradition et modernité : une mise en scène innovante et un métissage musical et chorégraphique inattendu. *Ararat mon amour* raconte la vie du peuple arménien, dans ses moments de joie comme dans ses moments de peine.

Le 3 juillet 2010, à 14h30 : la fête de l’alphabet et le goûter de fin d’année : salle « Gabriel Pagnerre », parc Gabriel Pagnerre, 59 370, Mons en Barœul.

2010 թ հուլիսի 3-ին, ժամը 14.30՝ այբբենարանի տոնը և տարեվերջյան համտեսումը: Հասցեն՝ salle « Gabriel Pagnerre », parc Gabriel Pagnerre, 59 370, Mons en Barœul:

Le 8 août 2010 de 10h30 à 17h00 : dans le cadre de nos quartiers d’été, atelier de démonstration et de fabrication de pain dont le *lavache*. Journée durant laquelle de nombreuses activités seront proposées par la ville de Mons en Barœul et la région (promenade en poney, conférence en calèche sur l’histoire de Mons en Barœul, animaux de la ferme, spectacles et animations diverses.

2010 թ. օգոստոսի 8-ին՝ ժամը 10.30-17.00՝ ամառային հանգստի կազմակերպման շրջանակներում հաց (այդ թվում և լավաշ) թխելու ցուցադրում: Այդ օրվա ընթացքում Մոնս ան Բարոլ քաղաքը և մեր մարզը կկազմակերպեն բազմաթիվ միջոցառումներ. զբոսանք՝ պոնիների վրա, դասախոսություն՝ նվիրված Մոնս ան Բարոլ քաղաքի պատմությանը՝ ձիակառքերի վրա, ընտանի կենդանիների ֆերմա, տարբեր ներկայացումներ և ժամանցներ:

À visiter : « The Armenian Alphabet in dance » (« L’alphabet arménien en danse ») :
http://www.youtube.com/watch?v=YEdU3IMPk98&feature=related

Անպայման այցելե՛ք « The Armenian Alphabet in dance » («Հայկական տառերն՝ արտահայտված պարի միջոցով»).
http://www.youtube.com/watch?v=YEdU3IMPk98&feature=related

À visiter : Musée Virtuel Arménien de France en attendant la réouverture physique de ce musée sur www.le-maf.com.

Անպայման այցելե՛ք www.le-maf.com՝ Ֆրանսիայի հայկական վիրտուալ թանգարանը մինչև նրա ֆիզիկական վերաբացումը:

Liste des dons effectués à ce jour (juillet 2010)

Մինչև 2010 թ. հուլիսը կատարված նվիրատվությունները

75 euros versés par Arsen Babayan

75 եվրո փոխանցել է Արսեն Բաբայանը:

Pour contact et pour toute remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@gmail.com
Par courrier : 12 rue Blériot, 59 260, Hellemmes-Lille
Par téléphone : 09.53.10.84.75 ou 03.20.64.20.09

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային փոստ՝ aadelille@gmail.com
Փոստային հասցե՝ 12 rue Blériot, 59 260, Hellemmes-Lille
Հեռախոսներ՝ 09.53.10.84.75 կամ 03.20.64.20.09

Responsables de publication en français : Louisette Lamarche, Garik Galstyan
Responsables de publication en arménien : Garik Galstyan, Haïk Gambarian, Sousanna Mughnetsyan, Jaqueline Kasparian
Traduction : Garik Galstyan, Haïk Gambarian

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատուներ՝ Լուիզեթ Լամարշ, Գարիկ Գալստյան
Հայերեն հրատարակչության պատասխանատուներ՝ Գարիկ Գալստյան, Հայկ Ղամբարյան, Սուսաննա Մուղնեցյան, Ժակլին Կասպարյան
Թարգմանությունները՝ Գարիկ Գալստյանի, Հայկ Ղամբարյանի

Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.

Տպագրված է մեր միջոցներով:
Չգցե՛լ հասարակական վայրերում:

ASSOCIATION ARARAT
12 rue Blériot
59260, Hellemmes-Lille

BULLETIN D’ADHÉSION

Nom, Prénom ____
Adresse ____
____
Mail ______________________________ Téléphone ______________________

Adhère à l’association « ARARAT » pour l’année 2009/2010
a payé une adhésion de 15 euros (par famille)

(Date et Signature)